ուր մաուզերիստները արիւնալի խնջոյքներ են սարքում Հայաստանի կոմունիստների նկատմամբ: Հայաստանի ներսում կոմունիստական բանւորական շարժումը յաղթահարելով միայն դաշնակները կարողացան Հայաստանը վերածել իմպերիալիստների համար յուսալի մի յենարանի՝ Արեւելքի յեղափոխութեան դէմ կռուելու համար:

Այն ժամանակ, երբ ամբողջ Արեւելքը բռնւած է ապստամբութեան բոցով, երբ Արեւելքի ժողովուրդների համագումարը երդւեցնում էր արեւելեան ժողովուրդներին ոտքի կանգնելու Կոմունիստական Ինտերնացիոնալի դրօշակի տակ միջազգային իմպերիալիզմի դէմ վերջին վճռական կռիւը մղելու համար, այդ ժամանակ Հայաստանի սպիտակ ազգակային կառավարութիւնը, հրով ու սրով չափելով ամբողջ յեղափոխական Հայաստանը, քայքայելով բոլոր բանւորական արհեստակցական կազմակերպութիւնները, անգլօ-ամերիկեան իմպերիալիստների հետ միասին նոր Գողգոթա է պատրաստում Արեւելքի յեղափոխական զանգւածներին:

Սակայն, ո՛չ կոմունիստական շարժումը Հայաստանում, ո՛չ էլ, մանաւանդ, Արեւելքի ժողովուրդների յեղափոխական շարժումը ոչ մի բոպէ չեն կասեցնի իրենց յաղթական արշաւը: Ընդհակառակը, արհեստով դահիճների ձեռքով ընկած ընկերներ Ալլահվերդովի, Ղարիբջանովի, Ղուկասի և ուրիշ շատ շատերի մահը, տասնեակ ու հարիւրաւոր ապստամբների մահացումը Հայաստանի խուլ ձորերում, լաւագոյն ապացոյցն է, որ «խաղաղեցւած Հայաստանը» իր մէջ թաղցնում է ներքին յեղափոխական ոյժ, որ որոշ պատմական բոպէին դարձեալ կռիւ կը սկսի, որպէսզի երկրի երեսից վերացնէ պատմութեան ընթացքը հրով ու սրով կասեցնել ձգտողներին:

Մենք ուխտել ենք տալիս Հայաստանի արիւնաքամ եղած բանւոր—գիւղացիական զանգւածներին՝ չենթարկել ազգակային խմբերի ցածրոգի պրովոկացիային, այլ յամառօրէն ու համբերութեամբ հաւաքել իրենց ցան ու ցիր եղած ուժերը իրենց դասակարգային մարմինների շուրջ, արթուն ունկնդրել կոմունիստական կուսակցութեան ձայնին, որի լաւագոյն անդամները իրենց հերոսական մահով բացին ազատագրման ճամբան:

Մենք դիմում ենք Խորհրդային Ադրբէջանի բոլոր բանւորական կազմակերպութիւններին, Կոմունիստական Ինտերնացիոնալին, Գործունէութեան ու Պրոպագանդի Խորհրդին և Արհեստակցական Միութիւնների Միջազգային Խորհրդին՝ մեզ հետ միասին բողոքի ձայն բարձրացնելու Հայաստանում իշխող սպիտակ տեռորի դէմ:

Թո՛ղ իմանան դեղին Ինտերնացիոնալի սոցիալ-դաւաճանները, որոնք Թիֆլիս եկան և սրտագեղ ընդունելութիւն գտան իրենց բարեկամների — դաշնակների ու մենշեւիկների կողմից, որ այդ երկրների երեւութական բարօրութիւնն ու անդորրութիւնը պահւում է անհարեկումով ու յեղափոխականների դաժան սպանումով, Հայաստանի խոնաւ բանտերում կալանաւորւած հարիւրաւոր բանւորների ու գիւղացիների տառապանքներով ու քաղցով:

Մա՛հ Հայաստանի բանւորների ու գիւղացիների վրա բռնութիւն կատարողներին:

Կեցցէ՛ յեղափոխական Արեւելքը:

Կեցցէ՛ Ինտերնացիոնալը:

Հայաստանի Կոմունիստ. Կուսակց. Կենտր. Կոմիտէ: Ադրբէջանի Արհեստ. Միութիւնների խորհրդին կից գտնւող Արհեստակցական Միութիւնների Արեւելեան Բիւրօ: Նախագահութիւն Ադրբէջանի Արհեստակցական Միութիւնների Խորհրդի»: